ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՈՒՄԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ

Բդոյան Լ.Ն. (ՀՀ ՊԿԱ, Երևան, Հայաստան)
l.bdoyan@mail.ru
Ներկայացման ամս.՝ 19.07.2019
գրախոսման ամս.՝ 24.07.2019
տպագրության ընդունման ամս.՝ 17.09.2019

Սույն հոդվածում քննարկվում են զինվորների հոգեբանական հարմարման հիմնահարցերը: Վերլուծվում են զինվորների սոցիալ-հոգեբանական հարմարման հետազոտության արդյունքները, ըստ որոնց նրանք զինվորական ծառայության ընթացքում չեն խուսափում խնդիրներից, ունեն ներքին վերահսկողություն, այլ մարդկանց նկատմամբ համակրանք, հարմարվողականություն, ինչը կարող է նպաստել զինվորական ծառայության արդյունավետության բարձրացմանը:

Հանգուցային բառեր. *զինվորական ծառայություն, հարմարվողականություն, զինված ուժեր, պետական ծառայություն:*

Ներկա ժամանակներում արդիական հիմնահարցերից է զինվորական ծառայության գործընթացում զինվորների հարմարումը, որը նպաստում է նրանց գործունեության արդյունավետությանը, առօրյա խնդիրների հեշտ լուծմանը, միջանձնային հարաբերությունների հաստատմանը, ծառայության մեջ լիովին ընդգրկվելը: Ելնելով խնդրի արդիականությունից և կարևորությունից՝ հոդվածում վերլուծում ենք զինվորների շրջանում իրականացրած հարմարման հետազոտության արդյունքները: «Զինվորական ծառայությունը պետական ծառայության հատուկ տեսակ է, որը ներառում է քաղաքացիների՝ ՀՀ օրենսդրությամբ հաստատված պարտականությունները ՀՀ Զինված ուժերում, այլ զորքերում, զինվորական միավորումներում, որտեղ օրենքով նախատեսված է զինվորական ծառայություն՝ որոշակի ժամկետում» [2, էջ 3]:

Զինվորական ծառայության ընթացքում ադապտացիայի, առաջադրանքները ակտիվ և արդյունավետ կերպով կատարելու համար կարևոր նշանակություն ունեն անձնակազմի՝ զինծառայողների անձնային դիրքորոշումները, մարտական պատրաստությունը, մարտական խնդիրների կատարմանն անձնական մասնակցության անհրաժեշտության գիտակցումը, որոնք էլ պետք է գտնվեն հրամանատարների՝ սպաների վերահսկողության և ուղղորդման ներքո: Եթե այս գործոնները հրամանատարները հաշվի առնեն, թե ինչպես է փոխվում անձնակազմի բարոյահոգեբանական վիճակը տրված մարտական առաջադրանքներից հետո, ինչպես նաև մարտի պայմաններում զինվորների մարտական գործունեության արդյունավետության նախադրյալները, անձնակազմի կառավարումը և զինվորների հարմարումը զինվորական ծառայությանը առավել նպատակաուղղված և արդյունավետ կընթանա [3, էջ 3]: Զինվորական ծառայությունը ենթադրում է ֆիզիկական և բարոյական

ուժերի մոբիլիզացում, ենթարկվելու կարողություն, կարգապահական նորմերի կատարում պահանջող ամենօրյա աշխատանք: Ընդհանուր խնդիրների լուծման ժամանակ բնավորության կարևորագույն գծերի՝ ընկերասիրության, կոլեկտիվիզմի դրսևորումը նպաստում է գործունեության արդյունավետության բարձրացմանը [4]: Զինծառայողի գործունեության մեջ իրենց առանձնահատուկ դերն ունեն անձի ընդունակությունները, որոնք պայմանավորում են որոշակի գործունեության հաջող կատարումը:

Ընդունակությունները չեն հանգեցնում գիտելիքների ու հմտությունների, բայց բացատրում են դրանց ձեռք բերման դինամիկան (արագությունը, ծավալը, հեշտությամբ մտապահելը և այլն): Առանձնացնում են զինծառայողների ընդունակությունների մակարդակներն ըստ հետևյալ ցուցանիշների՝

1 *ցածր մակարդակ*՝ զինծառայողը դժվարությամբ է ընկալում ուսումնական նյութը, զինվորական կանոնադրությունը յուրացնում է մյուսների օգնությամբ
2 *միջին մակարդակ*՝ զինծառայողը ունակ է հաղթահարել ուսումնական ծանրաբեռնվածությունը, սակայն դժվարությամբ է կատարում սահմանված նորմատիվները
3 *բարձր մակարդակ*՝ ուսումնական նյութը յուրացնում է *լավ* և *գերազանց* գնահատականներով, հեշտությամբ է կատարում սահմանված նորմատիվները [4]:

Հետազոտությունն իրականացրել ենք Շիրակի մարզի Գյումրի քաղաքի զորամասերից մեկի 56 զինվորի հետ: Զինվորական ծառայողների սոցիալ-հոգեբանական ադապտացիան (հարմարվողականությունը) ուսումնասիրելու համար կիրառել ենք «Կ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ախտորոշման» մեթոդիկան:

Այս մեթոդիկայի միջոցով մենք նպատակ ունենք պարզելու զինվորների սոցիալ-հոգեբանական հարմարման դրսևորումները՝ ապրումների, մտքերի, սովորությունների, վարքագծի դրսևորման պատկերը:

Անդրադառնանք հետազոտության արդյունքներին:



Նկար 1. Զինվորների սոցիալ-հոգեբանական հարմարման ցուցանիշները

Ինչպես երևում է արդյունքներից, զինվորների մոտ էսկապիզմը՝ խնդիրներից խուսափումը, ցածր է արտահայտված, ինչը նշանակում է, որ նրանք չեն խուսափում խնդիրներից: Իրազեկության ցուցանիշը բարձր է, այսինքն զինվորներն իրազեկված են, ունեն համապատասխան գիտելիքներ և տեղեկատվություն մինչ պարտադիր զինվորական ծառայությանն անցնելը: Հետազոտությանը մասնակցած զինվորների մոտ ցածր է դոմինանտումը, որը նշանակում է, որ զինվորները հակված են զիջել ուրիշներին, կախված են խմբի կարծիքից, կարող են պասիվություն դրսևորել:

Ուսումնասիրելով ստացված արդյունքները՝ պարզ դարձավ, որ զինվորների մոտ ավելի վառ է արտահայտված ներքին վերահսկողությունը, քան արտաքին վերահսկողությունը: Սա նշանակում է, որ նրանք ունենք բավականին ուժեղ կամք և ինքնակարգավորում: Ըստ զինվորների հետազոտության տվյալների՝ կարող ենք ասել, որ նրանց մոտ գերակշռում է հուզական բարեհարմարությունը և համակրանքն այլ մարդկանց նկատմամբ: Այսպիսով կարող ենք ասել, որ նրանք հեշտությամբ են անմիջական միջանձնային փոխհարաբերություններ հաստատում, ուշադիր են մարդկանց հանդեպ և հեշտությամբ են աշխատում նրանց հետ, պատրաստ են համագործակցել: Զինվորների մոտ նաև վառ է արտահայտված համակրանքն իրենց ես-ի նկատմամբ, քան հակակրանքն իրենց ես-ի հանդեպ, սա նշանակում է, որ նրանց մոտ բարձր է ինքնագնահատականը և վստահությունն իրենց անձի ու կարողությունների նկատմամբ: Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ զինվորների մեծ մասի մոտ արտահայտված է հարմարվողականությունը: Նրանք շուտ են կողմնորոշվում և շփման եզրեր գտնում անծանոթ շրջապատում, անծանոթ մարդկանց հետ:

Կատարված հետազոտական աշխատանքների արդյունքում հետազոտվողների մոտ արձանագրվեց անկեղծության միջինից բարձր ցուցանիշ, որտեղից էլ կարելի է եզրակացնել, որ հետազոտվողներից մեծամասնությունն անկեղծ են եղել և այդ գործընթացին վերաբերվել են պատասխանատվությամբ և լրջությամբ:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ զինվորները զինվորական ծառայության ընթացքում չեն խուսափում խնդիրներից, ունեն ներքին վերահսկողություն, այլ մարդկանց նկատմամբ համակրանք, հարմարվողականություն, ինչը կարող է նպաստել զինվորական ծառայության արդյունավետության բարձրացմանը:

Գրականություն

1 Կ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ախտորոշման մեթոդիկա, **Ս. Արզումանյան, Ս Մկրտչյան, Վ. Սարգսյան.,** Երևան, 2002, էջ 66-71.

2 ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագիրք, Եր., 2007, էջ 3-7.

3 Զինվորի, մոտոհրաձգային ջոկի և դասակի մարտավարական պատրաստություն Երևան, 2000, էջ 3.

4 **Մարգարյան Վ.** Մարտական ծառայության հոգեբանություն , Երևան 2009, 436 էջ, ՀՀՊՆ ԱՌՀԻ.
5 **Андреева Д.А.** О понятии адаптации. Исследование адаптации студентов к условиям учебы в Вузе. - Л.: ЛГУ 1973.
6 **Рындина, О.Г.** Социально-психологическая готовность допризывной молодежи к службе в, Автореферат диссертации, октября 2006г.

ПСИХОЛОГИЧЕСКАЯ АДАПТАЦИЯ СОЛДАТОВ К ВОЕННОЙ СЛУЖБЕ

Бдоян Л. Н. (Академия государственного управления РА, Ереван, Армения)

В статье рассматриваются вопросы адаптации военнослужащих к военной службе. Анализируются результаты исследования социально-психологической адаптации военнослужащих. Исследование показало, что военнослужащие во время службы в армии не избегают проблем, имеют внутренний контроль, симпатизируют других людей, адаптивны, что может способствовать повышению эффективности военной службы.

Ключевые слова: *военная служба, адаптация, вооруженные силы, государственная служба.*

PSYCHOLOGICAL ADAPTATION OF SOLDIERS TO MILITARY SERVICE

Bdoyan L. N. (Public Administration Academy of the RA, Yerevan, Armenia)

The article discusses the adaptation issues and the adaptability of soldiers to military service. The results of the study of the socio-psychological adaptation of military personnel are analyzed. The study showed that military personnel while serving in the army do not avoid problems, have internal control, sympathize with other people, are adaptive, which can contribute to increasing the efficiency of military service.

Keywords: *military service, adaptation, armed forces, public service.*